Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային կառավարում | e-gov

Կառավարության որոշումներ

18 Նոյեմբերի 2021, 1898 - Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 2215-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 1519-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ և 57-րդ կետերին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի N 706-Ն որոշմամբ հաստատված կարգի 38-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակում կատարել վերաբաշխում, N 3 աղյուսակում կատարել փոփոխություններ և լրացումներ, N 6 հավելվածի N 2 աղյուսակում կատարել փոփոխություններ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն որոշման NN 3, 4, 5, 9, 9.1 և 10 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 և 10 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1519-Ն որոշման 5-րդ կետում կատարել հետևյալ լրացումները.

1) «անհրաժեշտ գույքի» բառերից հետո լրացնել «, իսկ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամին՝ նաև ծառայությունների» բառերով.

2) «ձեռք բերվող գույքի» բառերից հետո լրացնել «և ծառայությունների» բառերով:

3. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝

1) 42,148.6 հազար դրամ գումարը դրամաշնորհային պայմանագրի հիման վրա հատկացնել «Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին՝ քոլեջի ջեռուցման համակարգի կառուցման, կցակառույցի իրականացման աշխատանքների ձեռքբերման համար.

2) 14,512.0 հազար դրամ գումարը դրամաշնորհային պայմանագրի հիման վրա հատկացնել «Ալավերդու պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին՝ քոլեջի տանիքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման համար.

3) 20,000.0 հազար դրամ գումարը դրամաշնորհային պայմանագրի հիման վրա հատկացնել «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ին՝ քաղ. Երևան, Տերյան 3ա հասցեում գտնվող տարածքի գույքով ապահովման համար.

4) 5,000.0 հազար դրամ գումարը (ներառյալ ԱԱՀ) դրամաշնորհային պայմանագրի հիման վրա հատկացնել «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սրվեղի վանքի տարածքում պեղումներն իրականացնելու համար.

5) 3,596.0 հազար դրամ գումարը դրամաշնորհային պայմանագրի հիման վրա հատկացնել «Նորայր Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ին՝ ջրատար խողովակների վերանորոգման աշխատանքների

ձեռքբերման համար.
6) 15,006.1 հազար դրամ գումարը դրամաշնորհային պայմանագրի հիման վրա հատկացնել «Երևանի Մ. Քաջունու անվան N 54 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ին՝ դպրոցի տաքանցումը եռահարկ մասնաշենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար.
7) 21,369.4 հազար դրամ գումարը դրամաշնորհային պայմանագրի հիման վրա հատկացնել «Երևանի Գ. Էմինի անվան N 182 ավագ դպրոց» հիմնադրամին՝ դպրոցի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար:
4. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ 2020 թվականի սեպտեմբերի 15-ի N ՀՀԿԳՄՍՆԳՀՇՁԲ-20/164 տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարած «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամին տրամադրել 780.0 հազար դրամ գումար պայմանագրի 1-ին չափաբաժնով՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով՝ որպես գնում չհանդիսացող ծախս (ԳՀԾ):
5. Թույլատրել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, Բյուրեղավանի համայնքի «Արծագանք» արձանի տարածքի բարեկարգման նպատակով, կատարել ձեռք բերվող աշխատանքների փոխարինում այլ բնութագրեր ունեցող աշխատանքներով՝ փոփոխություններ կատարելով 2021 թվականի մայիսի 25-ին «ԱՎԱԳ ՇԻՆ 1» ՍՊԸ-ի հետ կնքված N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-21/34 պայմանագրում մինչև պայմանագրի գնի 53 տոկոսի չափով՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 11-րդ և 14-րդ ենթակետերի և 56-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները:
6. Թույլատրել սույն որոշման 3-րդ կետում նշված կազմակերպություններին անհրաժեշտության դեպքում սույն որոշմամբ հատկացված գումարների շրջանակներում կնքված պայմանագրերով տնտեսված գումարները ուղղել անհրաժեշտ գույքի և ծառայությունների ձեռքբերմանը՝ ձեռք բերվող գույքի և ծառայությունների ցանկը համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հետ:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

հավելված1

հավելված2

հավելված3

հավելված4

հավելված5

հավելված6

հավելված7

հավելված8

հավելված9

հավելված10

Նիկոլ Փաշինյան